# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հ Հ, Կոտայքի մարզ, Գառնի համայնք, Ս. Շահումյան 4,
Garnihamaynq@mail.ru, հեռ. +37441125156

## ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ
## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01

**11/03/2024թ.** **գ.Գառնի**

2024 թվականի մարտի 03-ին՝ ժամը 16:00-ին, ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայքի, Գողթ գյուղի վարչական շենքում տեղի ունեցավ Գառնի համայնքի, Գողթ գյուղի որոշ փողոցների անվանակոչման վերաբերյալ հանրային քննարկումը:

Մուտքի խոսքով հանդես եկավ ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայքի ղեկավար Տիգրան Պողոսյանը և խոսքը տրամադրեց Գառնի համայնքի, Գողթ վարչական շրջանի ղեկավար Էմին Ղարիբյանին, ով ներկայացրեց լսումների իրականացման թեման:

Բաց լսումների բացման խոսքով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար՝ Լիպարիտ Թադևոսյանը, ով մասնավորապես նշեց, որ 2024 թվականի մարտի 03-ի բաց լսումների համար հիմք է հանդիսացել համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 21-ի № 217 որոշումը, ըստ որի համայնքապետարանի տեղեկատվական կառավարման համակարգում տրվել է հրավերի հայտարարություն:

Այնուհետև, աշխատակազմի քարտուղար՝ Լիպարիտ Թադևոսյանի կողմից ներկաներին ներկայացվեց, որ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 21-ի № 217 որոշման վերաբերյալ առաջարկություններ կամ առարկություններ՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից չեն ներկայացվել:

Տեղի ունեցավ նաև մտքերի փոխանակություն Գառնի համայնքի ղեկավար՝ Տ. Պողոսյանի և լսումների ներկաների միջև:

Բաց լսումները ավարտվեցին ժամը 16.45-ին :

Լսելով վերոգրյալը, հանրային լսման մասնակիցները առարկություններ չհայտնեցին և կարևորելով որոշ փողոցների անվանափոխության իրականացումը, տվեցին իրենց համաձայնությունը:

**Լսումների կազմակերպիչ՝** **Լ. Թադևոսյան**

**Համայքնի ղեկավար՝** **Տ. Պողոսյան**

**Գողթ վարչական շրջանի ղեկավար՝** **Է. Ղարիբյան**

**Արձանագրող՝** **Հ.Գրիգորյան**